Ի վէմ հիմնեալ Ուսումնարանս ուսմանց լցեալ յորդառատ,
Տարին սահեալ քաղցր է որդւոյդ հայրագորով բազմութեան,
զի շնորհասփիւռ սուրբ Միւռոնի հանդէս չքնաղ օրհնութեան,
յուսով ելից ըղձիւքս մեր և հաստատեաց յայն կարծիս,
թէ նորածին տարին բերցէ նորոյ բարեաց զհաւաստիս.
Բերկրեաց սիրտ իմ, (թնդա սիրով,) հրաւէր կարդա քեզ եղբարց,
փառեա անմահն այսօր ի լուր մերս անձկալի Հայկեանց
զի մխրազգեցաք թօթափեսցեն ըղձքով ցաւոց հինօրեայ,
և զուարթամիտք նոր բերկրութեամբ լցցին յաւէտ առ յապայ.
Համբակդ երբեմն թոթովախօս մի երկնչիր յայսմ աւուր,
զկապ լեզուիդ փակեաց Տէր քո ուսմամբ պէսպէս հեշտալուր.
և ի [illegible] մեծապարգև շնորհացն այն ի փոխան,
զերախտագէտ սիրտ և լեզու ձօնեա վեհին լրամեան,
Ընկերք աշխոյժ փութասցուք մեք երախտաւորք ի տաճար,
զհաստատարակ և զվեհապետ երգել ի ձայն զուարթարար.
զի թէ տաճարն նորին ձեռամբ զնախկինն եգիտ փառս և զշուք,
աղօթիւք մեր և զմեզ կենացն պահպանեսցէ մեծաշուք.

Աշակերտ Ե. դասարանի Գրիգոր Ս. Մարգարեան.

1869 ամի
1 Յունվար
Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

# Աստուածարեալ Վեհափառ Տէր,
# և Խոհեմազարդ Հանդիսականք.

„Շնորհաւոր նոր տարի և բարի Կաղանդ“:

Շունչ օրհներգու, ոգեա զգալուստ տարւոյն նոր,
Եւ խրախուսեա ի նոյն զընկերսդ բոլոր,
Բարեմաղթեա զպարգև Հոգւոյն եօթնարփի
Ի լուր Վեհին յայս տարեմուտ ըղձալի.
Տարածեա Տէր ըղձող շնորհացդ քաղցրաշունչ
Ժամ է պատեհ զի ըղձեսցուք զնոր շունչ,
Եւ այս պատուք հոգւոց անկոյս բանական
Աստալ ի տիս դեղ լինիցի փրկական.
Ծաղկեսցի Ձեօք բողբոջ պէսպէս գիտութեանց
Հալածեսցի յԱզգէ մերմէ հեռ նախանձ
Եւ անդաստան մտաց մերոց ամայի
Զուարթասցի առատ սերմամբք յայս տարի.
Ծիրանածայր եհաս տարին բազմաբաղձ
Որում ի սկիզբն ամանակաց Վեհ Աստուած,
Անքննելի կամօք զկենսասփիւռ ետ ծնունդ

Զի հողածինքս տացուք կենաց ըղձնունդ.
Եւ որ միով սքանչելագործ իւր բանիւ
Աւուրց, ամսոց, ամաց շարժեաց զմեծ անիւ
Զչքնաղագեղ նա և լուսոյն զշող սփռեաց,
Զի արարածք միշտ սիրեսցեն զլոյս անանց.
Այսօր դարձեալ շնորհէ զնորոգ տարեգլուխ
Եւ միշտ պայծառ պահէ զիւր լոյս կենսաբուղխ
Սակայն բարէ. սոսր ազինք յարեմուտս
Գոգցես միայն զնորին քողշեն ըղփոյլմունս.
Իսկ խանձարուրըն մարդկութեան տուն Հայոց
Որ նախածնունդ լուսոյն սփռեաց զանշէջ բոց,
Ի մողնջուց խեթիւ հայի յայն աղբիւր
Յորմէ բղխեաց նա կենսական զանոյշ բոյր.
Սիրեա Ազգդ իմ զմշտատև զայն ըղլոյս
Հնգերորդի դարուն ուղղեա զմտացդ յոյս.

Զի է այսօր և քո ծորտար ուղեցոյց
Զի հոլթեցէ զուղի մանուգ ի լաւ կեանս,
Այսօր ուսման քաջ առաջնորդն սրբանեաց
Ցորենմնից որ զկենսածիր զշող ծագեաց
Բեկրայատար սիրով գրկեալ զտայեմնս
Ծուալեցէ անխտրաբար զկրթ ըղձութ,
Երգ հայրակից ուսումնատենչ դուռն արագ
Ջերդ ուխտարից հեզահամբոյր ինչ պատակ,
Գիմեն առ քեզ վեհափառ չէր, յուսալից
Զի ըստ հնում տարածեսցես զլոյսն ամիթ,
Տուր չէր մաղթեն մանկունք յոյժ կորովի
Ջերկար ըզկեանս դիտայեսցես բարելի,
Եւ ծաղկեցո ըզխաչանիշ գաւազան
Ի պաշտպանել յաւէտ զորդի Հայութեան։
Ոն տարածեա զհոգւոյ քոյն ըղենսն
Զի ձգտեսցի շրջան կենացդ յերկար ամս
Եւ բախտաւորս որդիք վեհիդ փառաւոր,
Ցորդեկրակն յաւէտ մնայցեն ի յոլթու,

Խոնարհ Ծ. Քահանայ Սահակեան Ա. Յովսէփեան,

1869 ամ.
ի 1 Յունուարի։

---

# Սրբազնագոյն աստուածընտիր Հայրապետ։

«Շնորհաւոր Նոր տարի և բարի կաղանդ»...

Դիւրահոլով շրջան կենաց մահկանացուաց հոկայաձեմ թեւոցն բաղխելով հանրապարփակ սաւառնեալ էառ սրացոյց 'ի մէնջ 'ի սահմանաւոր կենաց մերոց, մամն 'ի մնամականէն, քայլ մի ևս ընդ յառաջ մղելով զկեանս մեր 'ի պակասութիւն աւուրց. բայց աղէ՛ յըղանան յերկունս բոլորից մնաց ծուփք ալէտանջ յուզմանց, առ շնորհաւորութիւն և առ խնդութիւն ընդ անցելոյն և ընդ ներկայիս։ Ո՞րինչ յայամ միտք մարդկան որոնեն 'ի յեղափոխութեանս խորհուրդ է. քանզի՞ մահկանացուն արագասլաց վարէ զմեզ յանմահական և յանդունդն։ Բայց 'ի սմին պատաղի՞ն և եթ անենացուն յածմունք մտաց և յերանականն այն մնաւորութիւն, ոչ ապաքէն և ուրախանամք, զի եհաս մեզ ամանոր և մեք ողջամբ ժամանեցաք 'ի սա տամ որոյ և հրճուիմք և շնորհաւորս կարդամք միմեանց. իսկ յայսմիկ զի ոչ խրախուսիթ հանդիսանալ մեր առաջի՛ հրաժեշտ անցելոյն, կամ արգասիքն, պտուղք բարեգործութեան 'ի նմին շահեալ մեօք, թէ ողջոյն նորամուտին և յոյս որ 'ի նմա գործելոց են ապագայ նորանոր բարեաց և ազգաօգուտ սխրագործութեանց։

Ո՛չ շլանամ ընդ սլացումն աւուրց միտք մարդկան մնայլընդատ պաշարեալ զքարեօք յածիլ անցելոյն և 'ի ներկայս զապագայ առաւելագոյն նմանապխեօքն, յոր կառուցեալ զաչս ուշոյ մտաց ըղսխրանաց 'ի նմին նկատեմք զաշխոյժ և զհաւատս. քանզի տարիք զտարիս ծնանին, և ծնեալքն երկնեն և ծնանին զնորանոր բախտ յառաջադիմութեան ընդհանրութեան Ազգիս մերոյ, և զապագայ բարօրութեան և զպայծառութեան Սրբոյ Եկեղեցւոյս 'ի հաստատութիւն նորին, որով և համազգային բարոյական կենդանութեանն Ձերովդ աստուածապարգև վսեմագոյն հանճարով և վարչութեամբ. ուստի բերկրին սիրտք որդ֊